Արդէն շատ ատենէ ի վեր գիտեմք, սիրելի՛ Որդեակք, որ դուք ոչ միայն ձեր նախորդներուն բարձրութեան վրայ կեցած էք, այլ և թերեզրիտի հոգին պահած էք անաղարտ. կարգին հետ երկար ստորինքէ ի վեր մեր սենեցած բարեկամական և մտերմական յարաբերութիւնները, թոյլ կու տան մեզի այսպէս խօսիլ: Այսօր, երբ այսքան բարեպատեհ առիթ մը կը ներկայանայ, Մեզի յատկապէս հաճելի է ցոյց տալ ամենուն և հրապարակաւ այն մեծ լուսակամութիւնը զոր ունինք Մենք այսքան նշանա-

ւոր Մօր մը ուստրերուն և դուստրերուն եկամտամբ: Եւ ստուգիւ եթէ կարելի չէ ըստ արժանւոյն շնորհաւորել երջանկութեանը այս մայրապետներուն որ Կարմեղեան կոչումը ունեցեր են. և խաշին մերկութիւնը աշխարհի հարստութիւններէն և պատիւներէն նախամեծար համարելով քաշուած են սուրբ առանձնութեան մը մէջ, որպէս զի հոն զոհուին ապաշխարութեան սեղանին վրայ, սիրոյ սպասիչ բոցով, իբրեւ Աստուծոյ հաճոյական պատարագներ, մուցուած աշխարհէ որուն համար սակայն գրչեր ցորեկ կը միջնորդեն. արդարեւ նուաճ գովութեան արժանի չեն այն կրօնաւորները որ թէեւ սատուածային իրերու հայեցողութեան նուիրած են ինքզինքնին բայց, բոլոր ժամանակնի տեսով չապուելով, գործելու ալ միջոց կ'ունենան, և գիտեն, արդար չափով և կատարեալ կարգապահութեամբ. միացնել հայեցողական կեանքը՝ գործնական կեանքին, շանալով ստանալ իրենց խրճիթներուն մէջ բոլոր բարձր առաքինութիւնները, որպէս զի յետոյ երթան ծառային դուռը Յիսուոսի Բերստոսի անուշ ըսլը: Ասոր համար, սիրելի Որդեակք, ձեր կարգին սովորութեան, և ձեր կրօնաւոր Հայրերուն կարգադրութեանց համեմատ, դուք ոչ միայն պիտի պահէք այս հայեցողական և գործնական կեանքի կրկին հրահանգը, այլեւ պիտի ջանաք զայն զարգացնելու և անոր մէջ գերազանց հանդիսանալու: Որովհետեւ եթէ Եկեղեցին, անցեալին մէջ, պէտք ունեցաւ այս կրկին և սրբազան պաշտօնին արդեւագործ օժանդակութեան, հիմայ ամէն ատեն աւելի պէտք ունի բարձրագոյն արժանիքի սէր մարդոց, որոնք գերազանցօրէն օժտուած ըլլան այս կրկին կեանքով, այսինքն մէկ կողմէն սերտեւ միացած ըլլան Աստուծոյ հետ, և մըս կողմէն, խնդրակալութեան հոգիներու նուիրումը ըլլան: այնպէս ըլլան վերջապէս, ինչպէս կը խնդրէր Աստուծոյ թերեզրիտ, իրենց Մայրը:

ՆԱԲՈԼԵՈՒՄԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

(Պերդան զօրավարին յիշատակագրեմէն բաղուած)

... Ստոյգ է որ Բերստոս մեզի կարգ մը հաւատալիք Ուրհուրդներ կ'առաջարկէ: Տիրաբար կը հրամայէ անոնց հաւատալ, և հաւատալու իբրեւ պատճառ՝ մի միայն սա սոսկ կալի խօսքը մէջտեղ կը բերէ. Սա Աստուած եմ:

Անշուշտ նաւատք պէտք է այս նախադասութեան համար, որմէ կը բխին մնա-

ցածրերը ամբողջովին։ Բայց անգամ մը որ Քրիստոսի Աստուածութեան հանգամանքը ընդունուի, քրիստոնէական վարդապետութիւնը կը ներկայանայ զրահաշիւի ճշգրտութեամբ և պայծառութեամբ։ Եւ անոր մէջ երեւան կու գայ պիտութեան մը հիսնալի յօդակցութիւնն ու միութիւնը։— Այս վարդապետութիւնը, Հին Կտակարանին կաթնած, ամենալաւ կերպով կը բացատրէ աշխարհի աւանդութիւնները։ զանոնք կը լուսաբանէ, և միւս հաւատալիքները անոնց սերտիւ կը միանան շղթայի մը ծայրայար օղակներուն պէս։ Քրիստոսի գոյութիւնը ծայրէ ծայր համակ խորհրդաւոր հիւստեածք մըն է, կ'ընդունին։ Բայց այս խորհուրդը կը պատասխանէ զգուարութիւններու որ ամէն գոյութիւններու մէջ կը գտնուին։ Մերժէ՝ զայն, աշխարհ հանելուկ մըն է։ Ընդունէ՝ զայն մարդուն պատմութեան հիսնալի լուծում մը, կ'ունենան։

Քրիստոնէութիւնը ամէն իմաստասէրներու և ամէն կրօններու վրայ առաւելութիւն մը ունի։ Քրիստոնէաները իրերու բնութեան մասին անձնախաբ չեն ըլլար։ Ոչ ոք կրնայ անոնց երեսը զարնել նրբաբանութիւնը կամ շատախօսութիւնը գաղափարապաշտներու, որոնք կարծեցին լուծել աստուածաբանական հարցերու մեծ հանելուկը՝ այս մեծ նիւթերուն վրայ սնտոի ճառեր գրելով։ Անգլիկաներ, որոնց յիմարութիւնը կը նմանի անմոռութեան աղու մը, որ կ'ուզէ ձեռքով երկինքի դպչիլ կամ լուսինը կը խնդրէ սնով խաղալու կամ հետաքրքրութիւնը յագեցնելու համար։

Քրիստոնէութիւնը պարզութեամբ մը կ'ըսէ։ Ոչ ոք չեսաւ զԱստուած եթէ ոչ Աստուած։— Աստուած յայտնեց իր ինչ ըլլալը։ Իր յայտնութիւնը խորհուրդ մըն է զոր բանավարութիւն ու միտք չեն կրնար ըմբռնել։ Բայց քանի որ Աստուած խօսած է, հարկ է հաւատալ իր խօսքին։ ասիկայ առողջ մտքի գործ է։

Աւետարանը ունի թաքուն ուժ մը, չեմ գիտեր ինչ հզօր բան մը, ջերմութիւն մը, որ իմացականութեան վրայ կ'ազդէ և սիրտը

կը հմայէ։ զայն խոկալով կը զգայ մարդ ինչ որ կը զգայ երկինքը գիտելով։ Աւետարանը գիրք մը չէ, կենսաւոր էակ մըն է՝ ճոխացած պորձունէութեամբ մը, զօրութեամբ մը որ իր ծաւալման ընդգիմացողները կ'ընկճէ կը նուաճէ։ Ահա՛ սեղանիս վրան է, այս պոհար գիրքը (կայսրը յարգանքով կը հպիւնոր)։ չեմ դադրիր զայս կարդալէ եւ ամէն օր միեւնոյն հաճոյքով կը կարդամ։

Քրիստոս երբէք չի փոխուիր, իր վարդապետութեան մէջ չ'երկմար։ Իր ամենափոքր մէկ իօսքն իսկ ունի պարզութեան և խորութեան կնիք մը, որ կը գրաւէ տգէտն ու գիտունը, բաւական է որ անոր ուշադիր ըլլան։

Ուրիշ և ոչ տեղ մը կը գտնուի այն շարքը գեղեցիկ գաղափարներու, բարոյական, ընտիր սկզբունքներու, որոնք յառաջ կը բերեն մեր հոգւոյն մէջ այն զգացումը զոր կ'ունենանք երբ ամառուան աղուոր գիշեր մը կը դիտենք երկնից աստղազարդ, ընդարձակածաւալ կամարը։

Այս ընթերցումը ոչ միայն կը զրաւէ մեր միտքը այլ նաև անոր կը տիրէ։ աս գիրքով հոգին մոլորելու վտանգին չ'ենթարկուիր երբէք։

Աւետարանը մեր մաքին տիրանալէն վերջը մեր սիրտն ալ կը յափշտակէ։ Աստուած իսկ մեր բարեկամն է, մեր հայրն է, և իրօք մեր Աստուածը։ Մայր մը իր դիեցուցած զաւակին աւելի հոգ չի տանիր։ Հոգին՝ Աւետարանին գեղեցկութենէն հրապուրուած յանկուցուած այլ ևս ինք իրեն աէրը չէ։ Աստուած բոլորովին իր իշխանութեան աակ կառնու զայն, անոր մտածումները և կարողութիւնները կ'ուզէ։ ան իրենն է։

Ինչ ասպոյցոյ Քրիստոսի աստուածութեան։ Այսքան բացարձակ իշխանութեամբ անիկայ մէկ նպատակ միայն ունի, անհատներու հոգեկան բարւոքումը, իզճի մաքրութիւնը, ճշմարտին յարումը, հոգւոյն սրբութիւնը։

Վերջապէս, և ասիկայ իմ վերջին փաստս է, երկնից մէջ Աստուած չկայ, եթէ մարդ

մը կրցեր է յղանալ և գործադրել կատարեալ յաջողութեամբ՝ Աստուծոյ անունը յափշտակելով՝ գերագոյն պաշտամունքը իրեն շորթելու վիթխարի ծրագիրը։ Յիսուս միայն համարձակեր է այս բանս ընելու։ Ա՛յն միայն որ բացայայտ կերպով ըսեր է. Սա Աստուած եմ, ինչ որ շատ տարբեր է սա խօսքէն։ Սա Աստուած մըն եմ, կամ ասկէ։ Աստուածներ կան։ Պատմութիւնը բնաւ չի յիշատակեր ուրիշ անհատ մը որ ինքզինքը այսպէս բացարձակ իմաստով Աստուած անուանած ըլլայ։ Դիցաբանութիւնն իսկ չի հաստատեր երբէք թէ Արամազդ եւ միւս աստուածները ինքզինքնին աստուածացուցիր են։ այս բանս իրենց կողմանէ պիտի ըլլար լրում հպարտութեան, եւ անհեթեթ հրէշութիւն մը, դանդաղանք մը։ Զանոնք աստուածացնողներն եղան հետագայ մարդիկ, առաջին բռնաւորներու ժողովները։ Ամէն մարդիկ միեւնոյն ցեղէ են, ուստի երբ Աղեքսանդր ինքզինքը Արամազդի որդի անուանեց, ամբողջ Յունաստան վրան խնդաց։ հռոմէական կայսերու աստուածացումն ալ հռոմայեցոց համար երբէք յուրջ բան մը չէ եղած։ Մուհամմէտ եւ Գոնիուկիոս ալ ներկայացիր են իբրեւ աստուածութեան գործակատարներ։ Նուա՛յի Նպերիա դիցուհին ալ, ուրիշ բան եղած չէ եթէ ոչ անձնաւորումը պուրակներու առաձնութեան մէջ առնուած ներշնչման։ Հնդկաստանի Բրահմա չաստուածն ալ հոգեբանական պիւտ մըն է։

(Շարունակելի)

ՕԹՕՄՕՄԻԼ ԹԱՊԻՐ ՕԼՈՒՆԱՆ ՏԻՎ

(Տեւամի)

Էօմրիւնիւն պու հաղին հիքեայէսինի նազլ էյլէտիքտէն սօնրա տիվ եինէ տէվամ իթտի։

— Մամաֆիյ, բէք տէ իֆրաթա վարտըրմամալը։ Պէնի գուլլանանլարըն գըսմը ազամընըն սաղլամ պիր պէլի օլուր, սարաւըպ սօլմազ։ Ֆագաթ պէնիմ ինթիյաճլարըմը տէֆ իտէպիլմէք իչլուն իտարէ եօլունու թուլմաղա մէճպուր տըրլար։

— Իտարէ եօլունու թուլմաղտա նէֆէնալըգ կէօրիւյօրսուն։

— Պէօյլէք ֆէնալըգ կէօրիւյօրում։ Սահիպէրիմ քէնտի քէյֆլէրինտէն պիր շէյ քէսէմէտիքլէրինտէն, սատագա վէ խայրաթ կիպի վազիֆէլէրինտէն քէսէրլէր... Ահ, կէօրտիւքլէրիմի, իշիթտիքլէրիմի պիլմիշ օլսայտըն...

— Բէճա իտէրիմ, սէօյլէյին։

— Վագթըլա ֆուպարանըն քիրասը վէրիլիրտի... քէսիլաի, վագթըլա քիւչիւք ալիլէլէրէ պիրէր համի պուլլընըրտ... գալմասը։ Վագթըլա Սէն Վէնսան տը Բօլ գօնֆէրանսլարը, սահիպսիզ չօճուզլար, գաթօլիք մէքթէպլէր, ֆագըր քիլիսալար... իչին երիզ ֆրանսլըգ պիրէր պանքնօթ վէրիլիրտի... պու կիւն անճագ օնար ֆրանգ վէրիլյօր վէ «պու կիւն հէր շէյ պահալը տըր, պուլտան ֆագլա վէրէմէյիզ» եօլընտա պէյանը իթիզար իտիլյօր, վէ զարիպի օ տըր քի պու էֆէնալլէր տէտիքլէրինէ հէր քէս ինանըյօր զանն իտիյօրլար... Պիւթիւն սէնէ զարֆընտա քէնտիլէրտէն սատագա իսթէյնլէրէ ճէվասլը րէտտ վէրիլյօրլար... Պիր վագթը գառալարտա, սէնէսինէ կէօրէ, սէքիզ, օն, օնպէչ պին ֆրանք պիր բարա թէսարրուֆ իպիլիրտի... պու թէսարրուֆլար գըսմէն տահա զիյատէ գազանապիլմէք վէ գըսմէն տէ խայրաթ վէ միւպէրրաթա սարֆ իտիլիրլէրտի... Պու կիւն շպէտ էօյլէ պիր թէսարրուֆ մէվճուտ օլսա պիլէ, օ տա պանա կէրէք տիր... անըմ... Վէ մաստամ քի պէնիմ իշթիհամ բէք պէօյլէք տիր, պիր կիւնտէ երիզ այիլէ էքմէյինի եէրիմ, արապալըղըմ (garage) պիր չօգ ֆամիլեա քիրասընը եուլթար... թամիրաթըմ նիչէ նիչէ խասթէլէրին տօգթօրընա վէրիլէպիլմէք բարայը... ետղըմ տա օնլարըն իլանընը թիւքէտիր...»

«Բէք չօգ այիլէլէր իչինտէ խայրաթա թալսաիս իտիլմիշ օլան պիւտճէլի մահվ իթտիմ պիլիլիրտիմ...»

* *

Տիվ պիր գաչ տագիգա սէօզիւնիւ քէստիքտէն սօնրա, մուխաթապը քէնտիսինէ շէօյլէ պիր սիւալտէ պուլլունտու։

— Օ տէյիլ ամիս, հիշ օլմազսա վազըթ
գազանտըրըրմըն :

— Վազըթ մը, Սայիր շէյլէրի եէտիյիմ
կիպի սահիպլէրիմին վազըթընը տա եէրիմ :

— Եօգ ճանըմ :

— Շիմտի անլարսըն, Պէնի տօգթօրլար
վէ թիւճճարլար կիպի, Փայիտէլի շէյլէրէ
գուլլանմըշ օլսալար, շիւպհէ իսթէմէզ քի
վազըթ գազանտըրըրմըն... Հալպու քի
պանա մալիք օլանլար սիւրաթլէ սիւրմէք
չօգ մէսաֆէ գաթ իթմէք տիվանէլիյինէ տիւ-
շէրլէր : Սապահլարն գալպտըղընտա մատամ
«նէրէյէ կիտէճէյիզ» տէյէ սօրար, էֆէնտի
տէ Իգպուլա, Վաննա, Լա Բօշէլէ եա Քաէ-
նէ վէ հախօտ Բարիգէ կիտէրիզ, ճէվազընը
վէրիւր : Հէման եօլա ըէվան օլուրլար :

«Փաթիլէն էվլէրինտէ պուլընմազլար :

«Էվլէլլէրի մատամըն վազըթը օլուրտը,
Փուգարա իչին քրօշէ եարարտը, եէթիմ չօ-
ճուգլար իչին Ֆիստան տիքէրտի, պէօյիւք
սալօնուռտա Մնուհէ աղաճը թէրթիպ իտէր
իտի, խասթալարըն գիյարէթինէ կիտէրտի.
պիր իքի քիւշիւք չօճուղա քրիստոնէական
էօյրէտիրտի... շիմտի պուլլարտան էսէր
պիլէ գալմամըշ տըր... մատամըն վազըթը
եօգ. շիմտի օնուռն պիւթիւն վազըթը պէնիլէ
կէշիյօր, գօշույօր, կիտիյօր, կէլիյօր...»

«Ահ, վազըթ, վազըթ, պանա տա վա-
զըթ լազըմ տըր : Պէն հէր քէսին վազըթընը
ալարազ քէնտիմ պէօյիւյօրըմ : Պէնիմ սա-
հիպլէրիմէ վազըթ գազանտըրապիլմէքլիյիմ
իչին, էվլէլ էմլրտէ վազըթլարընը պանա
եէտիրմէլի տիրլէր :»

Մուխաթապ,

— Սէն բէք տէհշէթլիսին, տէր :

— Տէհշէթլի օլմուշ օլմասամ, պիր տիվ
օլմազտըմ :

Պու սըրատա տիվ սէսինի ալչալթտը վէ
իչիտիլմէմէք իչուռն հալաշճա,

— Քիւշիւք չօճուգլարտա եէմէղսէյտիմ,
պէն տիվ օլմազտըմ :

Մուխաթապ տէհշէթլինտէն թիտրէտի վէ,

— Նէ տէմէք իսթէյօրսըն, անլաթ պա-
զալըմ, տէտի :

— Պիւլէրճէ չօճուգ կէմիշի... Պրսն-

սանըն պիր ուճընտան օ պիր ուճընտա գատար
հէր վազըթ իչիթտիյիմ «օթօմօպիլի օլանըն
չօճուգը օլմամայը... եա օթօյը սաթմայը
վէ հախօտ... օթօմօպիլտէ անճադ իքի եէր
վար տըր...» Սէօզլէրի տիր :

Մուխաթապ գօրգու վէ հիճապընտան
զըր գըրմըզը քէսիլէրէք :

— Սո'ւս օլ, անլատըմ անլաթմազ իս-
թէտիյին մէլանէթի :

* *

Իսթէրվիու եաբան քիմսէ տիվտէն այ-
ըլմազտան էվլէլ պիր գաթի նէթիճէյէ
տէսթրէն օլմազ իչիւն օնա սօրար,

— Սէնի թէպրիք մի եօգսա թէլինմի
իթմէլի :

— Նէ թէպրիք վէ նէ տէ լանէթ, Պէնի
գուլլանմայը պիլմէլի :

«Պանա բէրէսթիշ իթմէք իւզրէ պէնի
ալմըշ օլանլար պէնիմ էսիրլէրիմ տիր պէն
տէ օնլարըն ճէպպարըլըմ :

«Քէնտիլէրէ խըտմէթ իթմէքլիյիմ իչին
պէնի ալանլար պէնէմ սահիպլէրիմ տիրլէր
վէ իսթէտիլէրի կիպի պէնի էյիպ պիւք-
պիլլիլէր :

«Իլհագիգա պէնիմ եիւզիւմտէն խայ-
րաթ վէ միւպէրրաթը, Փուգարա վէ սա-
տազայը ուռուտանլար վարտըր, Փազաթ
պէնիմ վասիթամլա խասթախանէլէրէ, քի-
լիսէ վէ մանասթըրլարա, ըուհանի մէճլիւ-
լէրէ, խայր ամէլլէրէ գօշանլար տա վար
տըր :

Պիր թագըմ քիմսէլէր պէնի սըրֆ քէյֆ
ու միգաճլարընա խըտմէթ իթտիրիլէր : Պու-
նուռնա պէրապէր պէնի մէնֆաաթլարընա
խատիմ իտէն ագիլլէրտէ եօգ տէյիլ տիր :

«Պաշգա հէր շէյ կիպի, պէնտէ, պէնտէն
ալչագտա պուլընանլարըն հաքիմիյիմ, Փա-
զաթ ըուհլարը պէնիմ ֆէվգիմտէ օլանլա-
ընտա հիւքիւմէթինէ թապիյիմ :

«Պէն էյի պիր խըտմէթ քեար լաքին ֆէ-
նա տա պիր էֆէնտիյիմ» :

* *

Պու սէօզ իւզէրինէ եէկաիկէրինտէն այ-
ըլտըլար :

Օթմոսպիլ տէնիլէն պու տիվ եուվար-
լանըպ կիթմէյէ հազըրլանմագտա իքէն, ին-
թէրվիու եաբան քիմսէ քէնաի ֆիքրինտէ
չէօյլէ տիւշիւնիւյօր վէ մուհաքէմէ իտի-
յօրտը:

— Անլատըղըմա կէօրէ պու տիվէ գուր-
պան օլանլար, գուրպան օլմայը իսթէյէնլէր
տիր... ֆագաթ պու կիպի պիր արզուտա
պուլունան նէ՛ գատար տիվանէլէր վար
տըր...

Ա.Զ.Դ.

Արձագանցի պատ. բաժանորդներէն
չատերը ստէպ կը խնդրեն որ կրկին ան-
գամ ղրկուին իրենց չատացած թիւերը:
Թերթիս տնօրէնութիւնը նկատելով որ
առաքումները միշտ կանոնաւորապէս տե-
ղի կ'ունենան, եւ ինք թիւերուն չհա-
նելուն պատասխանատու չի կրնար հա-
մարուիլ, եւ միանգամայն այսպիսի խն-
դրանքներու կատարման հետեւանքով
ծանր ծախքերու կ'ենթարկուի, պարտք
կը համարի ծանուցանել թէ այսուհե-
տեւ անոնք որ չատացուած թիւերը կը
փափաքին ունենալ, պէտք է որ թէ՛
նոյն թիւերուն գինը եւ թէ՛ անոնց ա-
ռաքման ծախքը վճարեն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Նոր կար-
գինալներու ընտրութեան համար Կարգինալաթողովի
նիստերը սկսան մայիս 26ին:

Գաղտնի Կարգինալաթողովին մէջ որով կը կա-
տարուի այս նիստերուն բացումը, Ս. Քահանայապե-
տը կարեւոր բռնախօսութիւն մը ըրաւ:

*. Ամբողջ Կաթողիկէ աշխարհը մեծ պատ-
րաստութիւններ կը տեսնէ ըստ արժանւոյն կատա-
րելու Ս. Հաղորդութեան քանակահարկը Համա-
ժողովին հանգէսները, որ տեղի պիտի ունենան Լուբ-
տի մէջ յառաջիկայ Յուլիս 22—26:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԽԱՐԱՆ.— Մայիս
31ին, Տօն Հոգեգայտեան, Ս. Աստուածածին Աթո-
ռանիստ եկեղեցւոյն մէջ առաւուն ձայնաւոր պատա-
րագ մատոյց Գեր. Կղեմէս Վ. Աստուբեան, նոյն
եկեղեցւոյն Մեծաւորք. երգեցողութիւնը յաջողու-
թեամբ կատարեց ծանօթ երոժշտագէտ Գրիգոր
Մէհակերեանի կողմէ մարզուած դպրաց գաւառ, երե-
կային, ժամերգութեան յետոյ տեղի ունեցաւ Մայիս
ամսուան ջերմեանդութեան փակումը Ս. Աստուա-
ծածնի վրայ զեղեցիկ քարոզ մը խօսեցաւ Կղեմէս
Վ. Աստուբեան, եւ ապա Թափորի հանուեցան
Ս. Աստուածածնի հրաշագործ պատկերը և Կենաց
Փայտին մատուցեց, պատկերը կը կրէր Արճի. Յով-
սէֆ Արքեպիսկոպոս Ռոքոսեան, Կ. Պատրիարքական
Փոխանորդը. իսկ մասուէքը՝ Արճի. Մատթէոս Եպիս-
կոպոս Սիպեան: Թափորին կը մասնակցէին քահանա-
ներ և ստուար թիւով հաւատացեալներ: Թափորէն
յետոյ տեղի ունեցաւ Ս. Հաղորդութեան օրհնու-
թիւնը և ապա ամբողջ ժողովուրդը մեծ ջերմեան-
դութեամբ համբարեց Ս. Աստուածածնի հրաշա-
գործ պատկերը:

— Նոյն օրը Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն
մէջ ձայնաւոր պատարագ մատոյց Արճի. Մատթէոս
Եպիսկոպոս Սիպեան: Քարոզեց Գեր. Յովսէֆ Վ.
Սարուխանեան Պատարագէն յետոյ Ս. Հաղորդու-
թեան օրհնութիւնը տեղի ունեցաւ Վիեննական
Միթարեանց Բանկալթիի վարժարանին երգիչ խում-
բին քառամայն եղանակով և դաշնակորանի նուա-
գակցութեամբ:

— Քաղկեդոնի Ս. Լևոն եկեղեցւոյն մէջ Մա-
յիսի վերջին երեք օրերը Քառասուն ժամուց ջերմե-
անդութիւնը կատարուեցաւ: Երեք օրերն ալ ժո-
ղովուրդը բարեպաշտութեամբ ներկայ գտնուեցաւ
եկեղեցական արարողութեանց: Առջի երկու օրերը
քարոզեց մեծ եռանդով Գեր. Յովսէֆ Վ. Փափագ-
եան նոյն եկեղեցւոյն ժողովրդապետը. իսկ երրորդ
օրը, Թուրքերէն լեզուով՝ Գեր. Յովհաննէս Վ. Նալ-
պանտեան որ ձայնաւոր պատարագ ևս մատոյց: Կի-
րակի օրը առաւուն կատարուեցաւ առաջին հաղոր-
դութեան սրտաշարժ հանդէսը. իրիկունը՝ ժամեր-
գութեանէն յետոյ Ս. Հաղորդութիւնը Թափորի հան-
ուեցաւ:

*. Մայիս 31ին Պոլիս հասաւ Գերայագիլի Յո-
վակիմ թ. Ծ. Վ. Թովմայեան, Երուսաղէմի և Պատ-
րիարքական փոխանորդը, որ մասնակցած էր Զմմու-
եան Միաբանութեան անդրանիկ ընդ հանուր ժողովին:

*. Յունիս 2ին Պոլիս հասաւ Գեր. Մելքոն
Վ. Թասպաղեան, Զմմուեան Միաբանութեանէն որ
Ամեն. Հոգեւոր Տիրոջ հրամանաւ Մերտինէն ելած է
Պարոկաստան առաքելութեան երթալու համար:

Յաւով որտի կը հրատարակենք հետեւեալ եր-
կու Պաշտօնական Գրութիւնները.

ՊԱՏՐ. ԿԱԹՈՂ. ՀԱՅՈՑ

Թիւ 7289

Կ. Պոլիս, Բերս 3 Յունիս 1914

Գերլ. Հ. Բարսեղ Ե. Վ. Զոտոյեան

Մեծ, Ժողովրդապետ Միջագիւղի

Միջագիւղ

Գերլարգելի Տէր,

Անպատմելի ցաւով ծանօթացանք Ձեր հոմակէն
որ անցեալ Կիրակի օր՝ Յիսուսի Ս. Սրտին ջերմեան.
դու թեան վրայ գրուած Մեր Պատրիարքական կոն-
գրակին պաշտօնական ընթերցումը բռնութեամբ խա-
փանուեր է Միջագիւղի մեր Ս. Գր. Լուս. եկեղեց-
ւոյն մէջ՝ Տոք. Ստեփան Միսքճեանի կողմանէ, որ
սրբաւորներն մէջ աղմկելով և ազդարարելով, խռովու-
թիւն հաներ է առաջի Սրբոյ Սեղանոյն և Ս. Հոգոր-
դութեան, և այսպէսով սրբապգծուեր է եկեղեցին, և
յառաջ եկած է ծանր գալթակցութիւն ի մէջ հա-
ւատացեալ ժողովրդեան տեղւոյն և հասարակու-
թեան Արդ. որովհետեւ այնորինակ ըմբոստ արարե-
ներով հոգեւոր իշխանութեան այսքան ծանրապէս
անարգելու և եկեղեցւոյ սրբապգծուելուն պա-
րագային՝ եկեղեցական կանոնք ծանր պատիժներ
օտոմաներ են, որոնց գլխաւորն է տեղական Արքեպի-
սկոս վատն մինք ալ մեր հոգեւոր պաշտաման մէջ
զանցաւու չգտնուելու համար, այս ծանր պարո-
գային մէջ և Մեր Կ. Պատրիարքական իշխանու-
թեամբ, և զօրութեամբ ներկայ Գրեյս Արքեպի-
սկոս կառնուք Օրթոքէօյի մեր Ս. Գր. Լուսաւորիչ ե-
կեղեցին, մինչեւ որ հաճոյ թուի մեզի, և կը հրա-
մայենք որ այս Արքեպիսկոս յառաջ բերած բոլոր
պատժական արգիւնքները անվճար ի գործ դրուին
Ձեր կողմանէ:

Իսկ այս արգիւնքներն ինչպէս գիտէք, կը հային
նախ յաստուածային պաշտամունս, որոնք կը պա-
հանջեն եկեղեցական պաշտօնէի մը մասնակցու-
թիւնը, որպիսի են՝ պատարագ, օրհնութիւնք, թա-
փոր և այլն հետեւապէս սոյն տեսակ պաշտամունք
չեն կրնար բնաւ կատարուիլ եկեղեցւոյդ մէջ, Ապա
Ս. Խորհրդոյ մատակարարութիւնը, Վ. օ. Ս. Հո-
գորդութեան, վերջին օծման, պատկի ևն. ևն. Նոյն-
պէս չի կրնար կատարուիլ թողման արարողութիւն
եկեղեցւոյ, ևն. Այս ամենք արգիւնք են ցորչափ
տեսէ վերոյիշեալ Արքեպիսկոս Բոլոր ժանրամասնու-
թիւնները գիտէք որ կը գտնուին Բարոյական Աստ-
ուածաբանութեան գրքերուն մէջ, ի կարեւոր գիւ-
ղածի՝ կրնաք գիմել Մեզ:

Յակամայս ստիպուած ըլլալով այս եկեղեցական
պատժական օրէնքը գործադրել, կը հայցենք յԱս-

տուծոյ որ զգաստութիւն շնորհէ ըմբոստին և հա-
մախհներուն, եթէ դժբախտաբար գտնուին, օգնա-
կանութեամբ ազօթից աշն անմեղ հաւատացելոյ,
որոնք իրենց չարժանացած այս պատիժը ժա-
մանակ մը համբերութեամբ տանելով, իրենց մոլոր-
եալ եղբարց վրայ Աստուծոյ գթութիւնը պիտի հը-
րաւիրեն:

Ի վերջոյ մաղթելով Ձեզ վերին օգնականու-
թիւնը, մնամք

Գերլ. Տեառնդ

Աղօթարար

† ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

Կ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ:

*

*

ՊԱՏՐ. ԿԱԹՈՂ. ՀԱՅՈՑ

Թիւ 7290

Կ. Պոլիս, Բերս 3 Յունիս 1914

Գերլ. Հ. Բարսեղ Ե. Վ. Զոտոյեան

Մեծ, Ժողովրդապետ Միջագիւղի

Միջագիւղ

Գերլարգելի Տէր,

Ինչպէս մեր այսօրուան Արքեպիսկոս գրով ծանու-
ցինք ձեզի, Տոք. Ստեփան Միսքճեան, որ տեղ-
ւոր եկեղեցւոյն թաղականի հանգամանքով շարու-
նակ արգելքներ կը յարուցանէ եկեղեցական պաշ-
տամանց. վերջին կիրակի օրն ալ եկեղեցւոյ մէջ ա-
ռաջի սուրբ Սեղանոյն և Սուրբ Հոգորդութեան ըմ-
բոսական աղմուկներ յարուցած, Յիսուսի Ս. Սրե-
տին վերաբերեալ մեր պատրիարքական կոնգրակին
ընթերցումը արգելած, որով և եկեղեցին սրբապգ-
ծուած և ժողովուրդը ծանրապէս գալթակցած է:
որդ այսպիսի ըմբոստական ծանր արարքներ կարելի
չըլլալով թողուլ առանց եկեղեցական զգաստացու-
ցիչ պատժի մը, ներկայ Գրութեամբ կը բանադրենք
յիշեալ Տոք. Ստեփան Միսքճեանը և բանադրե-
ալ կը հրատարակենք զայն և զրկեալ յամենայն
խորհրդոյ և պաշտամանց եկեղեցւոյ և կը հրամա-
նենք որ ի պաշտօնէ ծանուցանէք զայս իրեն և որոնց
որ անկ է:

Խնդրելով որ Աստուած իր առատ գթութեամբ,
զգաստութեան շնորհը պարգեւէ անոր կը մնանք սի-
րոյ հաւատեօք

Գերլ. Տեառնդ

Աղօթարար

† ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

Կ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Երեսփ.
Ժողովը Յունիս 1ին գումարուեցաւ. Վաւերացուե-
ցան քանի մը երեսփոխաններու ընտրական տեղեկա-
գրերը և նկատի չառնուեցան Աքեայի երեսփոխանին
դէմ տեղւոյն ժողովրդեան գանդատները: Գարսափի

երեսփոխան Ֆէրճատ պէյ առաջարկեց շնորհակալութիւն յայտնել օգնականորդ Սէյիմ եւ Փէմալ պէյերուն, որոնք յաջողած էին ի Պոլսէն Գաճիրէ երթալ Ուրիշ երեսփոխան մը յայտարարեց թէ Ժողովը պէտք չէ միայն խօսքով յայտնէ իր գնահատութիւնը, այլ պէտք է օգնական մը գնելով նուիրէ բանակին Այս երկու առաջարկները միաձայնութեամբ ընդունուեցան:

Ժողովն ապա անցաւ օրակարգին, որ էր քննութիւնն ալի օրինագծին, որ կը տրամադրէր պետական ճամբաներու կարգը դասել Տիգրանակերտ—Բաղէշ ճամբան եւ Կարին—Քղի ճամբուն ալի մասը, որ Կարնոյ նահանգին սահմաններէն մինչեւ Խարբերդ կ'երկարէր:

Հանր. շինութեանց նախարարութեան ներկայացուցիչը բացատրեց թէ երեսփ. Ժողովին ներկայացուած օրէնքին մէջ յիշատակեալ ճամբաները ռազմագիտական մեծ կարևորութիւն մը ունին, քանի որ արեւելեան նահանգներուն եւ մայրաքաղաքին միջև ռազմական հաղորդակցութիւնը պիտի ապահովեն: Երևութեան աշխատութիւնը արդէն սկսած են Տիգրանակերտի եւ Բաղէշի մէջ:

Օրինագիծը նշնութեամբ վաւերացուեցաւ: Նոյն պէս անփոփոխ կերպով ընդունուեցան Կարնոյ նահանգին մէջէն անցնող Կարին—Տիգր. ճամբան, ինչպէս նաև Էրալ—Սթրանճա—Պելկոտտ—Հատէմքէօյ—Միտիա եւ Սէրալ—Չէրքէզ եւ Մուրապը—Քարըշաբան ճամբաները պետական ճամբաներուն մէջ դասող երկու օրինագիծերը:

Յետոյ Ժողովն սկսաւ շարունակել արհեստից քաջալերութեան օրէնքին քննութիւնը: Առևտրական եւ երկրագործական նախարարն եւ նոյն նախարարութեան ճարտարարուեստից անօրէնը ներկայ էին: Գործարար երեսփոխան եւ առևտր. յանձնաժողովին անդեկարեր Ալի Հայտար պէյ ամփոփեց օրէնքին գլխաւոր արամադրութիւնները:

Բաւական վիճարանելէ յետոյ յօդուածն ընդունուեցաւ նշնութեամբ:

Պահ մը դադարէ ետք Ժողովը վերսկսաւ վեցերորդ յօդուածին քննութեան, որ կը վերաբերէր օրէնքին արամադրած ապահարկութիւններն ու առանձնաշնորհումներն օտար գործարանատէրներու համար ալ գործադրելի ընելու: Այս յօդուածին քննութիւնը յետաձգուեցաւ կառավարութեան պահանջով: Դրդ յօդուածը 15 տարի կ'որոշէ օրէնքին գործադրութեան տեսչութիւնը: Տրդ յօդուածը կը թուէ նախորդ յօդուածներուն յիշատակած պայմանները լրացնող գործանցներուն շնորհուելիք ապահարկութիւններն ու առանձնաշնորհումները:

Ժողովը յաջորդ նիստերու մէջ քննեց այլեւայլ առժամեայ օրէնքներ:

Ներքին գործոց նախարար Թալէադ պէյ, «Բաժիրի» տնօրէնին հետ տեսակցելով յայտարարեց թէ անդառնալի կերպով որոշած է կարելին ընել Թրակիոյ կացութիւնը բարելոքելու համար: Նախարարն ապա թուրքէի յարաբերութեանց վերայ խօսեցաւ եւ ըսաւ. — Ռումանիա այցելելէս շատ հաճելի ապահարկութիւն մը ունեցայ Յունաստանի հետ մեր յարաբերութեանց մասին, որ պէտք է անպատճառ բարելոքեն: Ռումանիոյ բարեկամական միջնորդութեան շնորհիւ, լուծուած մը պիտի գտնուի կղզիներուն խեղքին համար:

Ֆրանսական Գաճիր իր հրաժարականը ներկայացուց նախագահ Մ. Բուանդարէի:

Ապանիոյ խաւովութիւնները կը շարունակուին — Զրոյց կայ թէ ապստամբական շարժումին պետ Արիֆ Հիքմէթ ապանուեց է:

ՎՐԻՊԱԿՔ 149 ԹԻԻԼՆ

ՎՐԻՊԱԿՔ

Էջ 337 Ս. 2, Տ. 1 քաջարձակ եւ նոյն իսկ...

Ուղիղ քաջարձակ...

Վր. Էջ 338 Ս. 2, Տ. 23 աստուածայինութիւնը

Ուղ. աստուածայինութիւնը

Վր. Էջ 339 Ս. 1, Տ. 16 անպատուութիւն քաջ

Ուղ. ... համարած

Վր. Էջ 340 Ս. 1, Տ. 21 անվրէպ նամարութեան

Ուղ. ... ճշմարտութիւն

Վր. Էջ 340 Ս. 1, Տ. 21 աստուածային հարստութեան

Ուղ. ... հաստատութիւն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	353
Յիսուս Քրիստոս	355
Հիմն վաւերացողքեր	357
Լիվոնոյի Հայ. Կաթող. եկեղեցւոյն երկհարկւումեակը	360
Եօթնեակ Քրիստոնէի	361
Նաբոլէոնի դատասանք	362
Օթոմայի ինքնիշխան	364
Տեղեկագրական	366

ԱՐՏՈՐԱՏԵՐ

ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԵՆ-ԽՄԱԳՐԱՊԵՏ



ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Արապագանգ Զարաթաթի, Բերա, Պայրամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսաւսն-
ման տար. Յր. 10. վեցամս. 5 .— Վճարմունք կանխիկ են .

ՀԱՍՑԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4 .
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ո ե է
յօդուած: 3. — Կեդծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4. — Ձեռագիրները եւ չեն դարձուիր: Յօդուածներու 5. —
ձեռագիրները պէտք է գրուած լլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հաղորդի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Բրիտտ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:
Տէր Կովստաս Բահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստմանայ-
նի ճոխ եւ ի վիճակի է որ ե իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէաներ,
մահազգներ, եւն. եւն.: Գիները անմրցելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի եւ տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn; Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakenny

Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.